ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-04-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «16» «03» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կազմակերպությունը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել Դուբլինի միջազգային կինոփառատոնում Արտավազդ Փելեշյանի «Բնություն» և «Տարվա եղանակները» ֆիլմերի ցուցադրություններին մասնակցության և վավերագրման կազմակերպման ծախսերի փոխհատուցմանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և հաշվարկի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինը պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագիր» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կազմակերպության կողմից Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

2.2. *Պետական մարմինն իրավունք ունի՝*

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կազմակերպության կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կազմակերպության կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կազմակերպությունից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կազմակերպությունից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները,

2.3.2. Սույն Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետներում Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (Հավելված N 3)՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.3. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.4. *Կազմակերպությունն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կազմակերպությանը հատկացնում է **2305,8 հազար** (երկու միլիոն երեք հարյուր հինգ հազար ութ հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կազմակերպությանը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրութ-յունը ստորագրելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված **ԱԱՀ-ի** գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կազմակերպության կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց

կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին,

5.6. Պետական մարմինը կարող է սույն կետով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկել և հաշվանցել Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2023 թվականի ապրիլի 5-ն է:

6.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն»
ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

_____ Շ. Միրզախանյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 1
«16» «03» 2023 թ.
N ՄՇԴ-154-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Դուբլինի միջազգային կինոփառատոնում Արտավազդ Փելեշյանի «Բնություն» և «Տարվա եղանակները» ֆիլմերի ցուցադրություններին մասնակցության և վավերագրման

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Տերյան 3ա
3	Ծրագրի անվանում	Դուբլինի միջազգային կինոփառատոնում Արտավազդ Փելեշյանի «Բնություն» և «Տարվա եղանակները» ֆիլմերի ցուցադրություններին մասնակցություն և վավերագրում:
3.1	Բովանդակություն	2023թ. Դուբլինի միջազգային կինոփառատոնում ցուցադրվել են անվանի կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի «Բնություն» և «Տարվա եղանակները» ֆիլմերը: Դուբլինի միջազգային կինոփառատոնը դինամիկ միջոցառում է եղել, որի ծրագրերում ընդգրկվել են միջազգային և իռլանդական ժամանակակից ու դասական լավագույն ֆիլմերը: Փառատոնին հրավիրված են եղել Արտավազդ Փելեշյանը, «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի և «Արև Ֆիլմ Ստուդիա» ՍՊԸ-ի համատեղ արտադրության «Բացակա պատկեր» վավերագրական ֆիլմի ռեժիսոր Հրանտ Վարդանյանը և կինոօպերատոր Վահագն Տեր-Հակոբյանը, որոնք նկարահանել են Վարպետի մասնակցության իրադարձային միջոցառման ընթացքը: Նկարահանված նյութը՝ որպես վավերագրություն ներառվել է վարպետին նվիրված «Բացակա պատկեր» կենսագրական ֆիլմի համալրված տարբերակում:
3.2	Նպատակ	Դուբլինի միջազգային կինոփառատոնի մասնակցությունը նպատակ է ունեցել ներկայացնելու հանրահայտ կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի ստեղծագործությունը, արժևորելու վարպետի տեղն ու դերը համաշխարհային կինոարվեստում:
3.3	Անցկացման ժամկետ	Փետրվարի 27-ից մարտի 4-ը, 2023թ.
3.4	Անցկացման վայր	Իռլանդիա, Դուբլին
3.5	Ակնկալվող արդյունքներ	Հայ անվանի կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի ստեղծագործության արժևորում, հայկական կինոյի դասականի հանրահռչակում:

3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Իրականացվել է 2 ֆիլմի ցուցադրություն, հանդիպումներ և հարցազրույցներ Ա. Փելեշյանի հետ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան
Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն»
ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան
Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 2
«16» «03» 2023 թ.
N ՄՇԴ-154-2023 պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

Դուբլինի միջազգային կինոփառատոնում Արտավազդ Փելեշյանի «Բնություն» և «Տարվա եղանակները» ֆիլմերի ցուցադրություններին մասնակցության և վավերագրման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Ճանապարհածախս** ավիատոմս՝ Երևան-Դուբլին-Երևան	տոմս	1	656,5	**656,5**
2	**Վարձակալության ծախսեր, այդ թվում՝**				**315,0**
	տեսախցիկ՝ Canon Mark IV-10000, տեսախցիկ՝ Osmo-Poket, օբյեկտիվ՝ Lens F=24-70, օբյեկտիվ՝ Lens F=70-200, շտատիվ՝ /Zachtlex/, ձայնագրման սարք՝ ZOOM H4, ձայնագրման սարք՝ /պետլիչկա/ Senheizer, լուսավորման սարք՝ Apature mini Led	օր	7	45,0	315,0
3	**Կեցության ծախսեր, այդ թվում՝**				**950,0**
	օրապահիկ՝ 2 մարդ x 103 եվրո x 414 դ. = 85,3 հ.դ.	օր	7	85,3	597,0
	գիշերավարձ՝ 1 մարդ x 142 եվրո x 414 դ. = 59,0 հ. դ.	օր	6	59,0	353,0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**1921,5**
	ԱԱՀ*				**384,3**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**2305,8**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպություն կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար
Հ. Հակոբյան
Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝
Շ. Միրզոյան
Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 3
«16» «03» 2023 թ.
N ՄՇԴ-154-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«16» «03» 2023 թ.
N ՄՇԴ-154-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Տերյան 3ա
ՀՎՀՀ՝ 01203271

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____
(անուն ազգանուն)

ազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն՝ _____
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
ն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե-ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝
_____
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրենի՝
_____